

աշխարհակալութեան ընդարձակ ծրագիր մը ընդգրկեց, որու միակ ձգտումն էր պարթեական ամբողջ պետութիւնը Հոռոմի ազդեցութեան ենթարկել: Մեծապէս ուշադրաւ է, որ այս հեղինական ուղութեամբ արտաքին քաղաքականութիւնը կը համընթանայ պետութեան ներսը՝ ազգային-հոռոմէական գլխաւորութեան դադափարէն հեռանալուն եւ կետարի դիտումին համաձայն հեղինական համաշխարհային միապետութեան մը կանգնումի ձգտումներուն: Բայց արեւմուտքի յետաշրջումը բացարձակապետութեան հետ ոչնչացուց արեւելեան այս մեծ յատակադիմները. եւ սակայն վերջին կղաղեանի ճիշդ այս արեւելեան ծառայուն քաղաքականութիւնը մասնաւոր ուշադրութեան արժանի է: Այս աշխատութեան նպատակն է այդ քաղաքականութեան ծագումն, ընթացքը եւ ձգտումները քննութեան առնուլ:

Մոմսէնի<sup>3</sup> կը պարտինք այն տեսութիւնը, թէ Ներոնի պարթեական քաղաքականութեան մէջ դիտումնաւոր եւ իր պատճառներու մէջ արդարացի չեղում մը կայ Աւգոստոսի աւանդութենէն: Իրմէ վերջը ամէնէն աւելի Բ. Վ. Հէնտըրըն<sup>4</sup> այս տեսութիւնը յառաջացուցած եւ հիմնաւորած է. սակայն անոր ուշադրութենէն վրիպած է կայսերական քաղաքականութեան յամառ հետեւողականութիւնը եւ նպատակին անչեղ ձգտումը տասնամեայ կռիւներու յարափոխութիւններու մէջ: Մեր ջանքը պիտի ըլլայ ըստ պատշաճի դարգացնել այդ տեսութիւնը, հիմնակէտ անոնով Կորբուդոնի պատերազմական տեղեկագիրը, զոր կը գտնենք երկու իրագրեկներու՝ Տակիտոսի եւ Դիոնի քով: Պիտի փորձենք յաջորդ էջերով աշխարհագրական եւ արեւելագիտական հետազոտութիւններու տուեալներու քննութեամբ՝ ներոնեան արեւելեան քաղաքականութեան ասիական շրջագիծը ըստ կարելու յն լուսարանել: Պարթեական ծանօթ պատերազմը լաւագոյն մեկնակէտը պիտի կազմէ:

(Շարունակելի): Թրգ. Վ. Մ. ՀԱՊՈՋԵԱՆ



<sup>3</sup> Հ. Պ. Ե. 384 եւ յլ. :  
<sup>4</sup> Ներոն, 149 յլ. :

**ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՔ**  
**ՍՏԱՍՊՈԼՈՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ**  
**ԵՐԵՄԻԱ ՉԷԼԷՊԻ ԲԵՕՍԻԻՐՃԵԱՆ**

Գ Լ Ո Ւ Խ Զ .

(Շարունակելի):

Ս. Երրորդութիւն եկեղեցիին փողոցին բերանն էր, որ 1860 ին «Մատուի Թատրոն» կոչուած շէնքին մէջ սկսաւ հայկական Թատրոնը իր գեղեցիկ ներկայացումներով, որ ատեն մեծանուն Միքայէլ Նալբանդեանը՝ հեղինակը «Ազատ Աստուածն այնօրից» երգին, Պոլսէ գտնուելով կ'արտասանէր հոն «Հայ Թատրոն Պոլսի մէջ»<sup>1</sup> անուն այն հիանալի ձառը, որուն պարունակած սքանչելի գաղափարները դեռ այսօր կրնան դաստիարակիչ ըլլալ եւ առաջնորդ: 1870 ին Պերաի աղէտալի Տրդեհին, եկեղեցիին շատ մը կալուածներու շարքին այրեցաւ Նաուսի Թատրոնն ալ, եւ այն օրէն մեծ հարուած մը կրեց հայ Թատրոնը: Եւ երբ 1871 ին Ազգայնորոնական վարչութիւնը որոշեց՝ որ Ս. Երրորդութեան կալուածները վերաշինուին եւ ընտրեց Պերաի համար կալուածոց հոգաբարձութիւն մը, այս վերջինը գեղեցիկ մտածումը ունեցաւ կալուածներու վերաշինութեանը հետ կառուցանել նաեւ Թատրոն մը:

Եւ արդարեւ Պերաի պողոտային վրայ կանգնեց 1885 ին երրորդական ճաշակով շատ գեղեցիկ Թատրոն մը, ուր տեղի կ'ունենային ոչ միայն հայերէն, այլ եւ՝ օտար լեզուներով ներկայացումներ մեծապէս հասութեամբ եկեղեցիին Գժբախտաբար 1892 ին հրոյ ձարակ եղաւ այս Թատրոնը, որուն տեղ՝ հոգաբարձութիւնը տարի մը վերջ աւելի օգտակար համարեց շինել ընդարձակ հիւրանոց մը, որ է՝ Թոքաթլեան մեծահամբաւ պանդոկը:

Այս պանդոկին մէջ հիւրընկալուեցաւ 1909 ին Նորընտիր Կաթողիկոս Մատթէոս Բ. Իզմիրեան, զնրքը Էջմիածին տանելու համար Պոլսի եկած եկեղեցական հրաւիրակներուն հետ: Հոս 1918 ին բնակեցաւ, Հայաստանի նորածին հանրապետութեան պատուիրակութիւնը, զոր թուրք կառավարութիւնը բանակցութեան հրաւիրած էր, վերածին Հայաստանի

<sup>1</sup> Մեղու, Կ. Պոլսոյ, Թիւ 117, 30 նոյմ. 1860, Երեւանի Թ. տարի, Թիւ 461, 8 գեկտ. 1860:

սահմանները ճշգրտու: Այս պատուիրակութիւնը 1918 յունիս 19 ի չորեքշաբթի օրը Կ. Պոլսի Ժամանելով՝ ճիշդ 5 ամիս մնաց եւ ապարդիւն մեկնեցաւ 1 նոյեմբեր 1918 ին, համբերական պատերազմի զենագործարէն քիչ վերջը:

Բացի Թոքաթլեան պանդոկէն՝ Պերաի Ս. Երրորդութիւն եկեղեցին իր շուրջը ունի շատ կալուածներ, որոնց հասցիներուն կը հսկէ «Կալուածոց Հոգաբարձութիւն» անունով յատուկ մարմին մը ընտրուած Ազգ. կենդրոնական վարչութիւնէն:

Այս եկեղեցիին մէջ հաստատուած է 1846 ին Մարտիկեան ընկերութիւն մը, որուն գլխաւոր նպատակն էր համանուն վարժարանին օգնել նիւթագէտ, բայց երկար չէ տեւած:

Հոն 1823 ին Գէորգեան Նազարէթ մանկավարժը ընդօրինակած է «Սերսէս Լամբրոնացիի երկասիրութիւնը» գործը որ կը պահուի Վիեննայի Միսիթարեանց ձեռագրատունը ինչպէս գրած եմ այս աշխատութեանս Ա. Հատորին 215<sup>րդ</sup> էջին վրայ:

Հոն 1844 հոկտեմբերին Գպիր Անտոն վարժապետ Տիօնեան քեօթեանց ընդօրինակած է՝ Տիփսիսեցի Ստեփան Բժիշկ Շահրիմանեանի շարագրած «Անդեղայ ժանտախտի» գործը զոր ծանօթացուցած եմ 1925 ին<sup>1</sup> եւ որ կը մնայ Ս. Ղազարի Միսիթարեանց քով:

3. Ս. Երրորդութիւն եկեղեցիէն դէպի հարաւ — արեւմուտք, անգրիական Գեսպանատունին ետեւը Այնալը 2էլմէ կոչուած Թաղին մէջ կայ, բողոքական Հայերու փառաւոր գեղեցկաչէն Ս. Երրորդութիւն ժողովարանը: Անոր կառուցման հիմնարկութիւնը տեղի ունեցած է 1905 ին եւ աւարտուած 1907 ին, ինչպէս կ'աւանդէ եկեղեցիին ձակաօր փորագրուած երկաթադիր արձանագրութիւնը, որ է՝

ԱՄԵՆԱՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ ԵԿԵՂԵՑԻ  
ՀԱՅ ԱՆԵՏԱՐԱՆԱԿԱՆՍՏ  
1905 ԴԵԿՏ. 1907 ՀՈԿՏ.

Հայկականի մօտ ձարտարապետութեամբ շինուած եկեղեցի մ'է այս, որուն անխտիր սատարած է ամէն հայ:

Անոր օրհնութեան եւ բացման հանդէսը կատարուած է 1907 ի վերջերը, եւ բացի ա-

<sup>1</sup> Բողոքաբեկ, 1925, էջ 38:

մերիկեան պաշտօնական ներկա,ացուցիչներէ, հանդիսական եղած են նաեւ ազգային պաշտօնական մարմինները:

Բողոքական Հայերու Ս. Երրորդութիւնը ունեցած է եւ ունի պերճախօս քարոզիչներ. որոնց մէջ նշանաւոր էին մանաւանդ՝ ներհուն Պրոֆ. Յակոբոս ճէճիգեանը, եւ պատուելի Աբսէն Շամունեանը. ասոնց հիանալի քարոզներուն հայ ժողովուրդը ամէն կիրակի հոծ բազմութեամբ կ'երթար ունկնդրել:

Այս եկեղեցին իւր ներքեւը ունի ընդարձակ յարկ մը, որ պիտի ծառայէր դպրոցի:

4. Բողոքական Հայերու Ս. Երրորդութիւն եկեղեցիէն յետոյ դէպի վեր երթալով կը գտնենք Թաուլա պաշի պողոտային վրայ՝ 2էօրլիք 2էլմէ կոչուած փողոցին մէջ՝ Անարատ Յղութեան Բերց վարժարանը, որ հիմնարկուած է 1843 յունիս 17 ին. բայց 1870 ի Պերաի մեծ հրդեհին այրելով, վերաշինուած է աւելի փառաւոր, ընդարձակ եւ քարուկիր, որուն մուտքի դրան վերեւ փորագրուած է հետեւեալ երկաթադիր

ՄԱՅՐ ՎԱՆԱՏՈՒՆ ԿԱԹՈՒՂԻԿԵԱՅ ԿՈՒՍԱՆԱՅ  
ԿԱՐԳԻ ԱՆԱՐԱՏ ԵՂՈՒԹԵԱՆ

երկաթ Արձանագրութիւնը:  
Այս վանատունը որ 80 եւ աւելի տարիներու պատկառելի տեւողութիւն մը ունի, դաստիարակած է բազմաթիւ հայ որբուհիներ, եւ կը դաստիարակէ դեռ, անձնուէր մայրապետներու ընտիր խումբի մը միջոցաւ:

1922 ին այս վանատունին քոյրերը իրենց աշակերտուհիներուն հետ փոխադրուեցան Հոռոմ, յետոյ Տրիես, ուր են տակաւին. բայց իրենցմէ մաս մը, վերագարձաւ Կ. Պոլսի, ու վերստին բացաւ վարժարանը:

Վանատունս ունի իր մէջ գեղեցիկ եւ բաւական ընդարձակ մատուռ մը:

5. Անարատ Յղութեան Բերց շէնքէն դէպ հիւսիս առաջ ընթանալով, դարձեալ Թաուլա պաշի պողոտային վրայ աջակողմեան փողոցի մը մէջ կը տեսնանք Համազգեսաց ընկերութեան երբեմնի վարժարանը, որ ունի դրանը վրայ 3 տող երկաթադիր փորագրուած արձանագրութիւն մը սապէս,

“Ժողովարանն եւ վարժարանն  
Համազգեաց ընկերութեան  
Հաստատեալ 1846 եւ նորոգեալ 1874”:

1846ին Պերաի մէջ “Համազգեաց”  
անունով հաստատուած էր նախաձեռնութեամբ  
Վենետիկոյ Մխիթարեան Հ. Պերաս Մինասեանի  
շատ կարեւոր ընկերութիւն մը, որուն կան-  
դամակցէին ամէն Հայ առանց կրօնի խտրութեան:  
Անոր նպատակն էր ազգային մտաւորական յա-  
ռաջագիւտութիւնը, եւ այս աղագաւ հիմնած  
էր վերոյիշեալ վարժարանը, որ ունեցած է շատ  
փայլուն անցեալ մը, եւ ժամանակաւոր ընդ-  
միջումներէ յետոյ, կրցած է գայթ ի գայթի  
շարունակել մինչեւ 1897 եւ 1898:

Համազգեաց ընկերութիւնը Ազգին մէջ  
մեծ դեր կատարելու նշանակուած էր, բայց  
շուտով լուծուած է, եւ թէեւ 1860ի ատենները  
դարձեալ վերակազմուած է, “Համազգային  
բարեգործական ընկերութիւն” անունով<sup>1</sup>,  
բայց երկար կեանք չէ ունեցած, եւ անոր  
վարժարանը մասնաւոր խնամակալներու շնորհիւ  
միայն կրցած է հիւանդկախ վիճակով մը ապրել:  
Այդ վարժարանը այսօր մեռած է բոլորովին եւ  
չէնքը, գողցնս, իբր մահարձան կը մնայ: Այրած  
է 1870 հրդեհին ու վերաշինուած 1874ին:

6. Համազգեաց վարժարանէն աւելի ա-  
ռաջ երթալով կը գտնանք նոյն ձամբուն վրայ  
ձախ կողմը Սազրզ աղան փողոցին մէջ Վե-  
նետիկի Մխիթարեան Միաբանութեան դպրոցը,  
որ ընդ հուպ կ’ողջունէ իր հարիւրամեակը, ձա-  
կատը ունի՝

“Մխիթարեան դպրոց  
հիմնեալ ի 1830”:

Համեստունակ արձանագրութիւնը երկա-  
թագիր փորագրուած, իր պարզութեանը մէջ  
շատ բան կը պատմէ. սակայն վերեւ տեսանք  
թէ 1800ին արդէն Վենետիկի Մխիթարեանը  
ունէին դպրոց Պերաի մէջ:

Այս դպրոցը Ազգին ընծայած է շատ  
կարեւոր ուսումնականներ, որոնց անունները հոս  
յիշել՝ շատ երկար կ’ըլլար:

Թողունք որ Հ. Սահակ Տէր Մովսէսեան  
ինքը ներկայացունէ անոնց շարքը եւ գործունէու-

<sup>1</sup> Մխիթարեանի Հավատք, 17 յունիս 1861:

թիւնը, իր “Պատմութիւն Մուրատ-Ռա-  
ֆայէլեան վարժարանի” անուն աշխատա-  
սիրութեանը մէջ:

Մխիթարեանց այս վարժարանին մէջ կը  
գումարուէր Մուրատ-Ռաֆայէլեան նախկին  
սաներու ընկերութիւնը, որ այժմ վերակազ-  
մուած է Խաչիկոյ մէջ:

7. Մխիթարեանց վարժարանէն քիչ մը  
վեր նոյն փողոցին մէջ Հայ կաթողիկ պատրի-  
արքարանին ետեւը կը գտնուի “Սուրբ Լու-  
սաւորիչ” անունով “Ուսումնարան կաթո-  
ղիկէ Հայոց” դպրոցը, որ ունեցած է փայլուն  
ընթացներ, բայց այժմ գոցուած է:

8. Այս Ուսումնարանին կից է Սաբբա ա-  
ղաճ փողոցին վրայ, Հայ կաթողիկ Ս. Աստուա-  
ծածին եկեղեցին, զոր կառուցած է 1865ին  
Մըսուրը Պօղոս պէյ՝ իբր դամբարան իւր գեր-  
դաստանին:

Այս եկեղեցին օծումը կատարուած է  
1866 սեպտ.ին, եւ է պատրիարքարան, եւ ունի  
իր շուրջը երկրատուն եւ կալուածներ. ասոնց բո-  
լորին հողը շնորհած է ժամանակին Պիլէղեքձեան  
Պօղոս Աղա, մէջն ալ փայտաշէն տունով մը,  
որ բաւական ատեն յանուն գլխաւոր Առաքելոց  
վարժարան ըլլալէ յետոյ՝ կ’այրի 1856ին, եւ  
նոյն տարին քարաշէն կը շինուի “տրովք ժո-  
ղովուրդին”:

Այս նոր շէնքին մէջ բացի նախկին վար-  
ժարանէն կը հաստատուի նաեւ Արքեպիսկոպո-  
սարանը եւ կղերանոց մը, որ 1870ի ահուկ  
հրդեհին կ’այրի յարակից շէնքերով. այս հրդե-  
հէն հրաշքով ազատ կը մնայ 1865ին կառու-  
ցուած եկեղեցին, որ ապակըկրէ նորոգութիւններ:

1879ին կը վերաշինուի այն, բայց վար-  
ժարանը կը յարկացուի “Անարատ Թղութեան  
կարգի կուսանաց”, մինչեւ 1889, որ ատեն  
Հռոմայեցի Տորլոնիա իշխանուհիին ծախքով կը  
վերաշինուի անոնց մայրավանքը, զոր յիշեցի  
նախապէս:

1889ին Ազարեան կաթ. պատրիարքին  
նախաձեռնութեամբ սոյն վարժարանը կ’ըլլայ  
Լուսաւորչեան Ուսումնարան:

Մինչեւ այսօր Հայ կաթողիկ հասարակու-  
թեան պատրիարքարանը հոն է. հոն նստած են  
եւ բնակած Ազարեան, Էմմանուէլեան, Սապա-

ղեան, Թերզեան, Նազլեան կաթ. պատրիարքները:  
Հոն է այժմ նաեւ Հայ կաթողիկներու նորընտիր  
աշխարհական պատրիարքը, զոր ժողովուրդը  
կառավարութեան արտօնութեամբ ընտրեց  
1926ին, նախապէս բռնութեամբ դուրս հա-  
նելով պատրիարքական փոխանորդ Նազլեան  
Յովհաննէս Արքեպիսկոպոսը՝ այդ հմուտ եւ պեր-  
ճախօս եկեղեցականը, որ այժմ կը գտնուի  
Պէյրութ կաթողոսական փոխանորդի պաշ-  
տօնով:

Ս. Աստուածածին եկեղեցիին մէջ կը հանգ-  
չին Մըսուրը Պօղոս պէյ եւ իր ընտանիքին ան-  
դամները, հոն թաղուած է Ստեփանոս կաթող.-  
պատրիարք Ազարեանը, որու օրով վերջ գտան  
հասունեան եւ հակահասունեան վէճերը եւ  
տեղի ունեցաւ այդ երկու բաժանումներուն  
վերջնական միութիւնը:

9. Ալ աւելի առաջ դէպի Թագսիմ,  
Փրանսական հիւանդանոցին երեւը Վալիտէ  
չէշմէ փողոցին մէջ կը գտնուի Ս. Յոհան Ոսկե-  
բերան փառաւոր եկեղեցին, որ շինուած է 1860ին.  
եւ օծուած 1862 փետրուար 2ին: Ոսկեբերան  
երկար տարիներ Հակահասունեանց սեպհական  
եկեղեցին եղած է:

Հոն թաղուած է հակահասունեան Էն-  
ֆիլէձեան Գրիգոր վարդապետը: Այս եկե-  
ղեցին թատր եղած է հասունեան եւ հակահա-  
սունեան բուռն կռիւներու, որոնց միջոցին 1870  
փետրուար 2ին հոն տեղի ունեցած պատարագը  
սիւնկիւլի կոչուած է, սուխաւոր վնասներու  
հսկողութեամբ կատարուած ըլլալուն պատճառաւ:

Այս եկեղեցին իր շինութենէն առաջ,  
1831ի ատենները եղած է աղքատ տղայներու դպրոց, եւ  
1837ին ալ կ’ուսնայ ընդարձակ մատուռ մը:

Եկեղեցիին մէջ բացի Էնֆիլէձեան վար-  
դապետէն թաղուած են նաեւ Սեբաստեոյ Առաջ-  
նորդ Ներսէս Արքեպիսկոպոս Հալէպեան, եւ  
եկեղեցիին հիմնարկող-ձարտարապետը կարա-  
պետ Թիւլպէնտեան:

Եկեղեցիին փակին մէջ կայ թաղական  
խորհրդարանի շէնքը, հետն ալ նախկին վարան  
դպրոց մը, զոր 1863ին կառուցած է Գեօզեան  
Յակոբ, ինչպէս կ’իմանանք դրանը վերեւը գե-  
տեղուած 7 տող երկաթագիր արձանագրու-  
թիւնէն, որ է՝

Յաւերժ Յիշատակ  
ծնողացն Անտոնի եւ Տիրուհոյ եւ եղբոր  
Պետրոսի  
Յուսումն եւ յԱստուածապաշտութիւն  
Ազգային մանկուոյն  
Կանգնեաց ի հիմանց գղարոցս  
Յակոբ Գեօզեան  
1863

10. Այս Ոսկեբերան եկեղեցիին մօտիկ-  
ները Շիշլի փողոցին մէջ, Միջագիւղի Անտոնեան  
միաբանութիւնն ալ ժամանակին ունեցած է  
դպրոց մը, որ անհետ եղած է կարճատեւ  
կեանքէ վերջ:

Ոսկեբերան եկեղեցիով կը լրանայ Պերաի  
մեծ պողոտային ձախ կողմը մինչեւ Թագսիմ  
գտնուած Ազգային հաստատութիւնները. աջա-  
կողմը գտնուածները շատ չեն, հազիւ երեք  
հատ, զորս պիտի դիտենք իրենց կարգին:

Երեմիա Զէլէպի Պերաի մէջ գտնուած իր  
ատենի գեոպանատունները առանձինն յիշատա-  
կելէ յետոյ, 241<sup>ր</sup> տողովը ցոյց կու տայ Հո-  
լանդական գեոպանատունը ու կ’ըսէ՝

Տող 240: “Այլ յառաջ Փիլէմէնկին  
որ եկեալն է ի Փիանտրան”:

Տող 241: “Սա տուն Անդոն կեալու-  
րին՝ որ փախեաւ յերկիր Լիվանոն”:

Տող 242: “Սա օգնութեամբ Հասա-  
նին՝ զանձեաց ի մահուն ցիր եւ ցան”:

Ըսել է թէ՝ Հոլանդական գեոպանին տունը  
կը վերաբերէր կեալուր (անհաւատ) մակա-  
նունով ձանցուած, գուցէ եւ Թրքացած<sup>1</sup> Անտոնի  
մը, որ կ’ընդունիմ թէ նոյն ինքն 217<sup>ր</sup> տողին  
մէջ յիշուածն է, եղբայրը՝ ուրացող Հասանին,  
մէջ յիշուածն է, եղբայրը՝ ուրացող Հասանին,  
քանի որ հոս ալ 242<sup>ր</sup> տողին մէջ երեմիա  
կը գրէ թէ “օգնութեամբ Հասանին զան-  
ձեաց: Վերոյգրեալ թրքացած Հասանին հա-  
մար է, որու շնորհիւ եղբայրը Անտոն կը զիզէ  
շատ հարստութիւն, հարկաւ գողութեամբ քանի

<sup>1</sup> Զամբեան, Գ. Հատոր, էջ 629 կը յիշէ Անտոն  
Զէլէպի մը թրքացած:

որ կը ստիպուի լիվանոն փախել ինչպէս կ'իմանա-  
ցուի 241<sup>ր</sup> տողէն, որպէս զի օձիքը կառավա-  
րութեան ձեռքը չտայ. կ'երեւի սակայն՝ թէ  
այդ հարստութիւնը խեր մը չ'ունենար իրեն եւ  
մահէն յետոյ ցիրուցանկ'ը լայ, ինչպէս կը յայտնէ  
242<sup>ր</sup> տողին վերջի մասը:

Երեմիա լաւ յիշատակութիւն մը չ'ընէր  
անոր մասին, եւ կ'այպանէ զայն գրելով՝

Տող 243: «Հայոց ոչ ինչ մին չ'օգ-  
նեաց՝ յիշելոյ չարար մին նշան»:

Տող 244: «Ապրօն չէր սորա մին  
մատն նամ՝ եհան ըստ իւր ազահութեան»:

Տող 245: «Չարար գաստուած օգնա-  
կան ոմն ի փառս յոյժ նանրոյ նրման»:

Այսինքն թէ՛ Հայոց որ եւ է օգնութիւն  
չըրաւ, յիշատակութեան արժանի բան մը չըրաւ.  
բայց երբ 244<sup>ր</sup> տողով «Ապրօն ասոր մէկ  
մատր իսկ չէր», կը գրէ, ըսել կ'ուզէ թէ Ապրօն  
որ հարստութեամբ Անտոնէն շատ վար կը մնար,  
եւ անոր մէկ մատր իսկ չէր, մեծամեծ բա-  
րեգործութիւններ ըրաւ, մինչ սա ազահութեան  
հոչակ հանեց, Աստուած իրեն օգնական  
ընաւ չըրաւ, փարթամութեան մէջ սոնքա-  
ցող փուճ մարդ մը եղաւ: Երեմիայի այս  
գրածը ինչ լաւ խրատ ու օրինակ է այն հարուստ-  
ներուն՝ որոնք իրենց հարստութիւնէն Ազգին  
մաս չեն հաներ. եւ ինչ լաւ յիշատակութիւն  
Ապրօն, որ արգարեւ մեծ բարերարի անուն թու-  
ղած է նախանցեալ դարու ազգային պատմու-  
թեան մէջ:

\* \* \*

Տող 244: «Ապրօն», այսինքն Աբրահամ,  
2էլէպի մականունով ճանչցուած՝ մեծագործ  
եւ բարերար հայ մ'էր, նշանաւոր վաճառական,  
եւ ապրած 17<sup>ր</sup> դարու մէջ. Չամչեան անոր  
համար կը գրէ թէ «էր մի յիշխանաւորացն  
Հայոց ի բանակն Եպարքոսին՝ Բէօբրիլու  
օղլու Ամէտ բաշային»<sup>1</sup>: Շատ ազգեցիկ  
անձ մը եւ Եղիազար Այնթապցիի կաթողիկո-  
սացմանը աշխատողներէն մին եղած է՝ 1663 թուա-  
կանին. Երեմիա 2էլէպի անոր թէ՛ քարտուղարն  
էր եւ թէ՛ խորհրդակցանք:

Ծնած է Պէլիւրա 1620—1621. մեռած  
է Էտիրնէ քաղաքին մէջ<sup>2</sup> եւ թաղուած տեղւոյն

<sup>1</sup> Չամչեան, Պատմ. Հայոց, Հատոր Գ. էջ 699—709:  
<sup>2</sup> Հայոց Ի Լիվանոն Ուղուրէան վարդապետի, Ա. Ե-  
նեակի, էջ 104:

Ազգ. Գերեզմանատունը. ունի տապանագիր, զոր  
1926ին հրատարակեց Յ. Քիւրտեան եւ է  
հետեւեալը<sup>1</sup>:

Այս է Տապան Հանգստեան  
Պէլիւրացի Մհտապի Մուրատեանի  
Որդի բարոն Աբրահամ 2էլէպույն  
Որ հանգեաւ առ Բրիտոս, թվին ՌՈՒԾ  
Յամի Տեառն, 1676:

Լիվոնո, Կրետէ, Ֆիլիպէ եւ այլ քաղաք-  
ներու մէջ շինած է եկեղեցիներ. իւր մասին  
գրողներ շատ եղած են, եւ վերջերս ալ անոր  
կենսագրութեան կարեւոր գիծերը «Բազմա-  
վէպ»ի մէջ ներկայացուց Յ. Քիւրտեան<sup>2</sup>:

Վենետիկի վանքը ունի ձեռագիր Աստուա-  
ծաշունչ մը՝ որ 1681ին կը պատկանէր՝ Պէլ-  
կրացի հանգուցեալ Աբրահամ 2էլէպիի  
(Ապրօ) որդւոյն՝ Մատթէոս 2էլէպիի  
որուն համար գրուած է թէ «ընակէր ընդ  
հովանեաւ Ս. Հրեշտակապետին Կ. Պոլսոյ»:

Այս Աստուածաշունչը գրուած է 1647ին,  
եւ կը պատկանէր Նապոլեանական իշխան Ապրոյ  
Ալան Բագրատունիի, որ Հ. Քերովբէ Վ. Չրա-  
քեանի միջոցաւ նուիրեց զայն 1923ին Ս. Ղա-  
զարի վանքին:

Ունի Յիշատակարան մը՝ զոր անձամբ ընդ-  
օրինակած եմ եւ է «Կատարեցաւ հոգիալից  
ըուրաստանս այս, ի թուականսիս Հայոց  
ՌՂԶ (= 1096 + 551 = 1647) ամի ի  
մայրաքաղաքն Երջանիկ ի մեծն Կ. Պոլիս,  
ընդ հովանեաւ հոչակաւոր տաճարին,  
սրբոյն Սիկողայոսի հրաշագործ հայրա-  
պետին... Յառաջնորդութեամբ սուրբ Էջ-  
միածնայ Աթոռոյն, Տեառն Տէր Փիլիպպոս  
Սրբազան կաթողիկոսի. ձեռամբ իւրովցի  
բազմամեղ գրչի Յակոբ սարկաւազի»:

Այս Ս. Նիկողայոս եկեղեցին Կ. Պոլսոյ  
Հիսար Տիպի տեղւոյն մէջ եղածն է, որու մա-  
սին կարդալ՝ Ծանօթագրութիւններու Ա. Հա-  
տորին 277—287 էջերը:

Վենետիկի վանքին մէջ կը գտնուի ձեռագիր  
ուրիշ Աստուածաշունչ մ'ալ, որ Ապրօ 2էլէպիի  
մասին կարեւոր տեղեկութիւններ կը պա-  
րունակէ, եւ զոր ընդօրինակած է 1656ին Լեհացի  
Յովհաննէս Գալիլ<sup>3</sup>:

\* \* \*

<sup>1</sup> Բազմավէպ, 1926, էջ 42:  
<sup>2</sup> Բազմավէպ, 1925, էջ 255: 1926, էջ 37, եւ 1927,  
էջ 237:  
<sup>3</sup> Բազմավէպ, 1925, էջ 259:

Ջուղայեցի Յակոբ կաթողիկոս՝ երբ 1666ին  
Կ. Պոլիս կու գար Մարտիրոս Կաթայեցիի եւ  
Եղիազար Այնթապցիի կոնկերուն վերջ տալու,  
Ապրօ 2էլէպին էր որ ընդ առաջ կ'երթար ընդ-  
հանուր Հայոց Հայրապետին<sup>1</sup>:

Կ. Պոլսոյ հին Ս. Սարգիս եկեղեցին երբ  
1652ին կ'այրի, Ապրօ 2էլէպին զայն վերաշինել  
կու տայ ու յետոյ կը մեկնի կ'երթայ Մոսա:  
Քիչ ժամանակ վերջ՝ թուրքերը այդ նորաշէն  
եկեղեցին քանդելու կ'ըլլան, առարկելով թէ՛  
առանց պետական հրամանի է այն շինուած:  
Ապրօ 2էլէպի այս բանը իմանալուն պէս, գիր  
մը կը թուցունէ Երեմիա 2էլէպիին, որպէս զի  
փութայ եկեղեցիին երեք խորանները քանդել  
տալով ու առջեւները պատ հիւսելով զայն  
Կարօցի վերածել<sup>2</sup>. Երեմիա Ապրօի յանձնարա-  
ւորարեւ կը վերածէ Կարօցի, բայց ահա Ղազար  
պատրիարք ազգադաւուրութեան կոթող մը կանգ-  
նելու համար կը մատնէ գործը 1662ին ու  
թուրքերը կու գան առօք փառօք փլցունել այդ  
վարժարանը...:

Այս քանդումին համար է անշուշտ որ  
Երեմիա 2էլէպի իւր Ստամբուլոյ Պատմութեան  
Ը<sup>ր</sup> գլուխին 51<sup>ր</sup> տողին մէջ՝ չ'ուզեր, պէտք  
չի տեսնար՝ քաղաքին մէտրէսէներուն (Կարօց)  
վրայ խօսիլ, քանի՛ մերինը խափանեցաւ  
կ'ըսէ, եւ այս պատճառաւ է որ իր «Վիլայա-  
տանութիւն յԱպրօ 2էլէպի»<sup>3</sup> վերնագիրը  
կրող Տաղերգութեան մէջ՝ երբ Ս. Սարգիսը  
քանդող ձեռքերը կ'անիծէ, չի քաշուիր Ղազար  
պատրիարքն ալ իբր մատնիչ ներկայացնել:  
Կատրիարքն ալ իբր մատնիչ ներկայացնել կը  
Եկեղեցիին քանդուիլը կը  
պատմէ հոն ու կը գրէ՝

«Թէ զխորանն սրբութեան մեր յօրինեալ  
Որմով գերեսըն պահարան իբրու ծածկեալ  
եւ ըզյատեանն մինչ ի դրունս ի բաց  
թողեալ,  
Հիւսիս հարաւ բարձր ի յերկրէ բազմոց  
շինեալ,  
Ամս ինչ դարոց ժողովրդեան իբր զայն  
ցուցեալ»:

Եւ ապա կը յաւելու հետեւեալ տողերը,  
«Հազարհարիւր եւ միտասան թվական  
հասեալ (1111 + 551 = 1662)

<sup>1</sup> Չամչեան, Պատմ. Հայոց, Հատոր Գ. էջ 714:  
<sup>2</sup> Բազմավէպ, 1925, էջ 260:  
<sup>3</sup> Երեմիայի այս գործը ձեռագիր է. քովս ունիմ  
անոր մէկ օրինակը, զոր մտադիր իմ հրատարակել մի օր:

Յորում՝ ամի գործիքս եղեալ զոր ճանեցեալ,  
Վէգիրալէմնը նարքային անդրադարձեալ,  
Յաւուր զատկի կիրակի յայսրը մըտեալ,  
Նուրկիւրակէ երկուշաբթին յոյժ ժամանեալ  
Մալդ ստաքեալ զեկեղեցեաց զըրունսն  
նրեալ,

Ան եւ յեկունս ըզմերք պատեալ խաւար  
նրեալ,

Մէզ մտախուղ վարանք թախծանք զմեզ  
պաշարեալ,

Յուրայ եղբայր Ղազար անունն որ պատրիկ  
լեալ,

Յայնրմ՝ վայրի ըզմատնութեան ժամըն  
գրտեալ...»

Եւ կը շարունակէ գեռ լուտանք եւ թշնամանք  
տեղալ Ղազարի հասցէին ու ողբալ ազգային  
վիճակը:

Այս Ղազար պատրիարքի մասին խօսած  
եմ արդէն Ծանօթագրութիւններու շարքին  
(տես Ա. Հատոր էջ 298—300), յիշատա-  
կութիւն ալ ըրած եմ սոյն քանդուած Կարօցի  
մասին (Ա. Հատոր էջ 181 եւ 182) եւ պիտի  
գրեմ՝ դարձեալ անոր վրայ Ը<sup>ր</sup> գլուխի Ծա-  
նօթագրութիւններու մէջ: Հոս գիտնանք թէ  
Ղազար պատրիարքը եղած է այդ Կարօցին  
քանդուիլը, զոր չէի գիտեր երբ Երեմիայի կեն-  
սագրութիւնը կը շարագրէի, (տես Ա. Հատոր):

Ապրօ 2էլէպի դժբախտաբար անզօր կ'ըլլայ  
վերաշինելու այդ քանդուած եկեղեցին կամ  
Կարօցը, զի Մոսայէն կ'անցնի գործով Ատրիա-  
նուպոլիս եւ ալ կը մնայ հոն...:

Ապրօ 2էլէպի թողած է բարեճնունդ զա-  
ւակներ, որոնցմէ սերած են Զփուռնոյ մեծա-  
համբաւ Ապրօեանները, բոլորն ալ նշանաւոր  
իրենց տաղանդով ու գործերով:

Տող 252: Այս տողով Երեմիա կը նշա-  
նակէ ֆրանսական զեպանատունը, ուր դես-  
պանը 1737ին Կոլոտ Յովհաննէս եւ Գրիգոր  
Շլթայակիւր պատրիարքներուն խնջոյք տուած  
է<sup>1</sup>, ինչպէս յիշատակած եմ Ղալաթիոյ Ս. Լու-  
սաւորիչ եկեղեցիին պատմութեանը մէջ:

Տող 269: «Եւ մանուկն ի թուին ժՄՍԻ  
Մահատակն ամաց ննգէտասան»:

<sup>1</sup> Չամչեան, Հայոց Պատմութիւն, Հատոր Գ. էջ 811  
եւ 812:

